ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՄԱՐՏԻ 18-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «ԱՆԱՌԱԿԻՆ», Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը, Քարոզ խոսեց հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Եղիայանը, բնարան ունենալով «Զի այսպէս ուրախութիւն լինիցի յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՐՏԻ 24-ԻՆ, ՇԱԲԱԹ, ատօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի վիրապն։ Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի առաջ, պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Եղիայանը և հավուր պատշաճի քարոզեց, բնարան ունենալով «Եթէ ունիցիք հաւատս որպէս զհատն մանանխոյ և ասիցէք թթենւոյս այսմիկ, խլեաց և տնկեաց ի ծովու, և հնազանդեսցի ձեզ»։

***

ՄԱՐՏԻ 24-ԻՆ, ՇԱԲԱԹ, Հոգևոր Ճեմարանի դահլիճում, տեղի ունեցավ երեկույթ նվիրված Կոմիտաս վարդապետին։ Դասախոսեց Ճեմարանի հայկական խազագրության ուսուցիչ պր. Վարշամ Փարսադանյանը։ Գեղարվեստական բաժնում կատարվեցին խմբերգեր և հայկական խազագրությամբ երգեցողություններ։

***

ՄԱՐՏԻ 25-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «ՏՆՏԵՍԻՆ», Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը, քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պալյանը, բնարան ունենալով «Եւ զովեաց Տէր զտնտեսն անիրաւութեանն»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՄԱՐՏԻ 28-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, «ՄԻՋԻՆՔ», Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց Անբնագալի հոգեպարար արարողություն, ի ներկայության հավատացյալների հոծ բազմության։

Արնագալի երգերը զգացումով կատարվեցին Հոգևոր Ճեմարանի ուսանողության կողմից։

***

ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «ԴԱՏԱՒՈՐԻՆ», Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը, քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Պողոսյանը, բնարան ունենալով «Պարտ է յամենայն ժամ կալ յաղօթս և մի ձանձրանալ»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը.

***

ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, տեղի ունեցավ մեծահռչակ երգչուհի Գոհար Գասպարյանի համերգը, ընկերակցությամբ դաշնակահարուհի Նորա Ոսկանյանի և ֆլեյտիստ Լևոն Ալոյանի։

Տաղանդավոր երգչուհին հանդես եկավ դասական ու կրոնական մասնավոր պատրաստված ճոխ հայտագրով։

Հայտագրի առաջին բաժնում ներկաներին հոգեկան իսկական բավարարություն պարգևեցին Ստրատելլայի «Մեղեդի»-ն, Հենդելի «Արիացիր դուստր Սիոնի»-ն, Մոցարտի «Ալելուիա»-ն և Բախ-Գունոյի «Ավե Մարիա»-ն։

Հայտագրի երկրորդ բաժնում շնորհալի երգչուհին ապրումով երգեց նաև Կոմիտասի «Կռունկ»-ը և «Ծիրանի ծառ»-ը։

Համերգին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսներն ու ուսանողները, Մայր Աթոռի պաշտոնեությունը և աշխատողները։

Համերգն ունկնդրվեց մեծ բավականությամբ։

***

ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Աւետումն Ս. Աստուածածնի», Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր արեղա Եղիայեանը։

***

ԱՊՐԻԼԻ 8-ԻՆ- ԿԻՐԱԿԻ, «ԳԱԼՍՏՅԱՆ», Մայր Տաճարում պատարագեց Հոգեշնորհ Տ. Գրիգոր արեղա Եղիայանը, քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննէս քահանա Մարուքյանը, բնաբան ունենալով «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր Միածին ետ, զի ամենայն, որ հաւատայ ի նա, մի կորիցէ, այլ զկեանս յաւիտենականս ընկալցի»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԱՊՐԻԼԻ 12-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր ճեմարանի հանդիսասրահում, Մայր Աթոռի միաբանության, ուսանողության և աշխատողների համար շահեկան դասախոսություն տվեց պրոֆեսոր Ճաղարյանը՝ սրտի արատների վիրահատության մասին։ Հարգելի պրոֆեսորի հետաքրքրական դասախոսությունը լսվեց մեծ ուշադրությամբ և գոհունակությամբ։

Դասախոսությունից հետո ցուցադրվեց սրտի վիրահատության վերաբերյալ հատուկ կինոժապավեն։ Ապա հարգելի դասախոսը պատասխանեց ներկաների հարցերին։

***

ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «ԾԱՂԿԱԶԱՐԴ», Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, բնաբան ունենալով «Նստեալ ի յէջ և յաւանակ, կրկին աղանց գոլ օրինակ» շարականի տողերը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ, ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Ցիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Ներսես արեղա Պողոսայանը։

Հոգևոր ճեմարանի ուսանողությունը, առավոտյան ժամերգությունից հետո, խոստովանվեց և հաղորդվեց։

Երեկոյան Ոտնալվայի կարգը կատարեց Մայր Տաճարի յուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Արարողության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Գիշերվա ժամը 8-ին Մայր Տաճարում սկսվեց հսկումի ժամերգությունը։ Քարոզը խոսեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը՝ «Սիրտ իմ սասանի, սարսափ զիս ունի, վասն Յուդայի» բնաբանով։

Արարողության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ, ԱՎԱԳ ՇԱԲԱԹ, «Ճրագալոյց Զատկի», Երեկոյան ժամը 5-ին սկսվեց ժամերգությունը և ապա սուրբ պատարագը։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, որը նախագահեց նաև Զատկի նախատոնակի հանդիսությանը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով, «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» Հարության շարականի երգեցողությամբ, առաջնորդվեց Վեհարան։

***

ԱՊՐԻԼԻ 23-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Յիշատակ մեռելոց», Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մատենչյանը։ Հավարտ սուրբ պատարագի, Հոգեհանգստյան պաշտոն կատարվեց «վասն համօրէն ննջելոց»։

***

ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Հոգևոր ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, ընկերակցությամբ բարեշնորհ Անաստաս սարկավագ Մովսիսյանի և տիրացու Կարապետ Սերայդարյանի, մեկնեց Թաքու, հայոց եկեղեցում նախագահելու համար հին տոմարով Զատկի տոնակատարությանը։